



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(62)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2022

**ԼԵԶՎԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԿԵՏԵՐԸ**

ԴԱՎԻԹ ԳՅՈՒԼԶԱՏՅԱՆ

Համառոտագիր

Լեզվական նշանին, ի թիվս այլ առանձնահատկությունների, հատուկ է նաև գոյաբանական չափելիությունը, որտեղ չափման միավորների դեր են ստանձնում հակադրվող զուգանդամները՝ որպես համապատասխան նշանային հասկացության չափելի մեկնակետեր: Չափելիությունը վեր հանող իրողություններից են նշանի տարածաչափական ու հարթաչափական, հնարավորության ու հավանականության, համաչափության ու տարաչափության մեկնակետերը: Սա ակնհայտորեն իմաստայնական (semantic) երևույթ է՝ նշանի և առարկաների հարաբերությամբ, որտեղ նշանի նկատմամբ առարկայի դերով հանդես են գալիս նշված զույգերը: Նկատենք, որ առարկա-մեկնակետերը նշանի միջնորդությամբ կարող են հարաբերվել ոչ միայն ներզուգային, այլև միջզուգային խաչավորումներով, այսինքն՝ ոչ միայն հակադրվելով, այլև լրացնելով և փոխալամանավորելով իրար: Եթե խոսվում է զույգերի խաչավորման հնարավորության մասին, նշանակում է՝ խիստ անջրպետ չկա նրանց միջև, և ինչպես նշանային որոշակի իրադրություններում նշանակիչն ու նշանակյալը կարող են փոխվել տեղերով, այդպես էլ փոխատեղելի են թե՛ նշանային մեկնակետերը, թե՛ մեկնակետային տարբեր զույգերը: Այստեղ մեր քննելիքը գերազանցապես վերաբերում է նշանի չափելիության մեկ՝ հնարավորության-հավանականության զույգին: Լեզվական նշանի՝ միմյանց գոյությունը պայմանավորող հիշյալ մեկնակետերը բաշխված են լեզվի քերականական կարգերի, ստորակարգային բոլոր մակարդակների, նաև՝ վերմակարդակային իրողությունների վրա: Կարծում ենք՝ այս նորովի չափումներով առավել համակողմանիորեն է վեր հանվում լեզվական նշանը, առավել մեկնելի է դառնում նրա բնույթը, որով առավել խորքայնորեն է բացահայտվում լեզուն ինքը՝ որպես համընդգրկուն նշան:

Հիմնաբառեր՝ նշանասերում, նշանուլորտ, ներունակ նշան, լեզվական համակարգ, ստորակարգային մակարդակներ, լեզվական գոյամակարդակներ, առանձնական եզակի թիվ

Ներածություն

Վաղուց հետե լեզվաբանությունը գիրկընդխառն է զարգանում նշանագիտության հետ: Սակայն պետք է ասել, որ անցյալ դարի 30-70-ական թվականները լեզվական երևույթները վեր հանելիս լեզվաբանության ուշադրության կենտրոնում էր գլխավերապես լեզվական օրինաչափությունների ճշգրտությունը, որի բացահայտումը հաճախ ինքնանպատակ բնույթ էր կրում: Այնինչ լեզվական իրողությունները, առավել ևս ողջ լեզվական հորինվածքը, տրամաբանականից զատ, նաև հոգեկան և նյութական (հնչական) շերտեր են պարունակում: Ահա թե ինչու վաղ թե ուշ շրջադարձ էր լինելու լեզվաբանության հետազոտական ընթացքի մեջ, և այդ ընթացքը հանգեցնելու էր լեզուն ոչ միայն ներսից, այլև դրսից գննելու անհրաժեշտության, իսկ դրա համար հարկ էր ոչ միայն դարձ դեպի նյութի քննության փիլիսոփայական ակունքներ, այլև այնտեղից բխած աղբյուրի ստեղծագործական կլանմամբ ուսումնասիրության նորովի հագեցում նշանագիտական լիցքերով: Ահա գիտական այս համապարփակությամբ է գնահատելի այս կարգի հետազոտությունների **արդիականությունը**: Աշխատանքի **նորույթը**, որ շաղկապված է արդիականությանը, առաջին անգամ լեզվական նշանի լուսաբանումն է՝ հնարավորության և հավանականության մեկնակետերով: Ինչ վերաբերում է **տեսական նշանակությանը**, ապա սա էլ շաղկապված է թե՛ արդիականությանը, թե՛ նորույթին, որովհետև տեսական քիչ թե շատ կարևոր ձեռքբերում չի կարող նորարարական շունչ չպարունակել, իսկ վերջինս ինքնին արդիական արժեք է տեսական պրպտումների համար: Բացի դրանից՝ այս ուսումնասիրությունն ընդլայնում է լեզվական նշանի՝ առանց այն էլ տարողունակ պատկերացումների շրջանակը, հնարավորություն է տալիս նշանի, ի թիվս այլոց, նաև՝ չափումնաբանական գնահատումների: Նկատենք, որ նշանի նորովի գնահատումների հնարավորությունն արդեն միայն տեսական կարևորություն չունի. նման հետազոտություններում այն միաժամանակ պետք է համարել նաև **կիրառական նշանակություններից** մեկը: Իսկ կիրառական մյուս նշանակությունը համալսարանական ծրագրերում

ընդհանուր լեզվաբանության և նշանագիտության դասընթացների համար նոր նյութի ապահովումն է, սրանով պայմանավորված՝ հիշյալ ծրագրերի և դասընթացների վերակազմավորումը: Հետազոտության գլխավոր **եղանակը** լեզվական ներհակությունների բացահայտման տրամախոսությունն է: Գործադրված են նաև նկարագրական, տիպաբանական համեմատության, ներքին վերականգնման **մեթոդները**: Ուշադրության են առնված համաժամանակյա, տարաժամանակյա և հարաժամանակյա **հայեցակետերը**: Աշխատանքի **նպատակը** լեզվական նշանի չափաբանական երկու մեկնակետի գործառության և հարաբերակցության վերհանումն է: Նպատակին հասնելու **խնդիրները** նշանի վարքի զննումն ու հիմնավորումը և չափաբանական մեկնություններն են համապատասխան միջավայրում համապատասխան ազդակների նկատմամբ:

Նշանասերման ուրվագծային բնութագիրը

Նշանը մեկնելի է նշանային այն իրականությամբ, որով տվյալ իրողությունը տեղակալում է այն առարկան, երևույթը կլն, որին փոխարինում է, և այդ փոխարինյալ իրողությունն էլ տեղակալման հատկությամբ **նշանավորվում է**, դառնում է նշան, հետևաբար նշանը լիարժեք ընկալելու համար հարկ է պարզել նշանասերման ողջ գործունեությունը, մասնավորապես նշանակման ընթացքը, դրա արդյունքով որոշված նշանակությունը և վերջինիս մասնակցությամբ կազմավորվող իմաստը: Սակայն սա ևս ամբողջը չէ: Քանի որ նշանը ոչ նշանային բևեռին հակադրվելիս գործառում է որոշակի իրադրության մեջ, ապա վերջինս դրսևորվում է իբրև նշանային իրադրություն, որով ձևավորվում է նշանային դաշտ՝ նույն իրադրությամբ թելադրված ոչ նշանային դաշտին հակադրվող: Եվ քանի որ նշանի գործունեությամբ է գոյավորվում նշանային դաշտը, ապա նշված գործունեությամբ այդ դաշտը նշանայնացնում է նաև այն տիրույթը, որի նկատմամբ նշանային է ինքը. ոչ նշանային դաշտը ևս դառնում է նշանասերման կարևոր ոլորտներից մեկը: Մյուս կողմից, սակայն, նշանի կազմավորման և գործունացման համար նպաստավոր դաշտ է անհրաժեշտ, ուստի նշանի գոյավորումը և նշանային դաշտի գոյավորումը ոչ թե իրարահաջորդ, այլ համաժամանակյա գործունեություն են, իսկ դաշտի նպաստավոր պայմանների ամբողջությունը հենց նշանային իրադրությունն է: Նշանասերմամբ ի հայտ եկող նշանային և ոչ նշանային դաշտերի համակազմը նշանոլորտն է: Նշանոլորտում նշան է ամեն ինչ, այդ

թվում՝ ոչ նշանային դաշտը, որի օժանդակությամբ է երևակվում նշանային դաշտը: Ոչ նշանային դաշտը յուրօրինակ նշան է այն բանի, որ կա դրան հակադրվող նշանային դաշտ: Այսպիսով՝ նշանը լիարժեքորեն մեկնաբանելու համար հարկ է վեր հանել նրան ներսից ու դրսից առնչվող բոլոր հակադիր բևեռների գործունեությունը՝ նշանոլորտի ողջ բաղկացույթամբ: Նշանոլորտի այսօրինակ ըմբռնումը թույլ է տալիս ողջ գոյություն ունեցողը համարել նշանային, և ամեն մի նշանային իրողություն այդպիսին է տվյալ իրադրության ոչ նշանային իրողության հարաբերությամբ: Մյուս կողմից էլ ողջ գոյություն ունեցողը հնարավոր նշանային իրադրություն է անգամ իր կայական վիճակում: Յուրաքանչյուր կայական պահ այդպիսին է իր իրացվելիությամբ՝ հնարավոր իրացվածությամբ: **Հնարավորությունը** ներունակության և ներգործության պահերի պարունակ է, ուստի կայական հնարավոր նշանը սերտաճածությունն է կայական ներունակ և կայական ներգոր նշանների, որոնց դրսևորելիությունը նշան է **հավանական** նշանի գոյավորման: Կայականության սկզբնապահին հնարավորությունը՝ իր ներունակությամբ, «հանդարտ» նշան է, ներգործությամբ՝ իրացման պատրաստ «թրթռուն» նշան, որով շնչավորվում է հնարավորության հավանականությունը: Կայականության մեջ ելակետային է հնարավորության ներունակ նշանը: Ներգոր նշանով մշտական ուղեկիցներ են դառնում հնարավոր ու հավանական նշանային զուգանդամները, որովհետև ներգործությունից է սկսվում դրանց փոխատեղելիությունը՝ **հնարավոր նշանի հավանականությամբ** և **հավանական նշանի հնարավորությամբ**:

Դիտարկվող մեկնակետերը՝ ըստ սպորակարգային մակարդակների

Հնչական մակարդակի համար ուշագրավ փաստեր կան լեզուներում: Դիմենք, նախ, գրաբարի տվյալներին: Գիտենք, որ ի տարբերություն շատ լեզուների՝ հայերենում երկու թրթռուն (r)ձայնորդ ունենք, որովհետև դրանք տարբեր նշաններ են՝ իրենց իմաստակազմիչ և իմաստազատիչ դերերով (հմմտ. դուր – դուռ), այսինքն՝ տարբեր հնչույթներ են: Սակայն որոշ դիրքերում սրանք դրսևորվում են որպես միևնույն հնչույթի ենթահնչույթներ, ինչպես՝ ուղղ.՝ այր, սեռ՝ առն, ուղղ.՝ լեառն, սեռ.՝ լերին կլն: Քիչ չեն այսպիսի օրինակները գրաբարում, և նշված հնչյունական օրենքն իր հետքերն ունի մինչև իսկ մեր օրերում: Որպես

կանոն, օտար աշխարհագրական հատուկ անուններում և հատուկ անձնանուններում [ն] և [յ] ձայնորդներին նախորդող դիրքում հայերենում [ր]-ի բազմաթիվ տարբերակն ենք ընտրում և գրության մեջ էլ արտահայտում ենք **ռ** տառով, օրինակ՝ Կալիֆո**ռ**նիա, Նիդե**ռ**լանդներ: Սակայն հենց գրաբարյան շրջանում *ամառն* բառի սեռականում զուգահեռաբար հանդիպում են թե՛ ամա**ր**ան, թե՛ ամա**ռ**ան ձևերը, կամ՝ եղե**ռ**ն, սեռ՝ եղե**ր**ան || եղե**ռ**ան, ոլո**ռ**ն, սեռ՝ ոլո**ր**ան || ոլո**ռ**ան, իսկ մի շարք բառերում չի էլ գործում այդ օրենքը՝ լիսե**ռ**ն – լ(ի)ս**ռ**ան, խու**ռ**ն – խ**ռ**ան, ծիծե**ռ**ն – ծիծ**ռ**ան, կնճի**ռ**ն – կնճ**ռ**ան, ճպո**ռ**ն – ճպ**ռ**ան, նու**ռ**ն – ն**ռ**ան, թո**ռ**ն – թո**ռ**ին կլն: Սա խոսում է այն մասին, որ 5-րդ դարում արդեն չէր գործում [ն]-ի մերձավորությամբ պայմանավորված [ռ]-ի և նրանից հեռացմամբ պայմանավորված [ր]-ի տարբերակմամբ դրսևորվող հնչյունական օրենքը, կամ, որ նույնն է, գործում էր նշված հնչյունական օրենքի ժամանակային սահմանափակման իրողությունը: Դառնալով նշանային մեկնակետերին՝ դյուրին է արձանագրել, որ 5-րդ դարի գրաբարում հնարավոր և հավանական են եղել [ն] ձայնորդի ոլորտով պայմանավորված [ռ]> [ր] հնչյունական օրենքի և՛ գործումը, և՛ չգործումը: Հակառակ սրա՝ նույն շրջանում պարտադրային էր [ոյ] երկբարբառի պարզեցման օրենքի հնարավոր և հավանական մեկնակետերի գործադրումը ձևակազմության և բառակազմության դեպքում. օրինակ՝ թո**յ**լ – թո**ւ**լոյ || թո**ւ**լի, թո**ւ**լամիտ. գո**յ**ժ – գո**ւ**ժի || գո**ւ**ժոյ, գո**ւ**ժկան. գո**յ**ն – գո**ւ**նոյ || գո**ւ**նի, գո**ւ**նաւոր կլն: Աշխարհաբարում մասնակիորեն է գործում այս օրենքը. ձևակազմական առումով դրսևորվում է բայակազմության մեջ, չի գործում հոլովակազմության մեջ՝ հմմտ. գո**ւ**ժել և գո**ւ**յժի: Հիմնականում գործում է նաև բառակազմության մեջ՝ գո**ւ**նեղ, թո**ւ**լական կլն, այսինքն՝ գրաբարյան շրջանի այս օրենքի պարտադրային հնարավորությանն ու հավանականությանն աշխարհաբարում հակադրվում են հնարավոր հավանականության սահմանափակումները:

Վանկակազմի գործառության առումով վանկապարպման համաբնույթ իրողություն կա մերօրյա գրական արևելահայերենում և անգլերենում:

Խոսեսնք, նախ, հայերենի օրինաչափության մասին: *Սկ, շպ, շք, սպ, սք, սփ, զք, զգ* տարրերի կապակցությամբ սկսվող մի շարք բառերի կանոնական արտասանությունը խնդրահարույց է հայ լեզվաբանության մեջ. այսպես՝ *սկիզբ, շպար, շքասպ, սպա, սքակ, սփյուռք, զքոսանք, զգալ*

և նման այլ բառերի սկզբում արևմտահայ գրական տարբերակում կա [ը]ձայնավորի հստակ արտասանություն: Արևելահայոց խոսքում այն կամ թույլ է արտասանվում, կամ բոլորովին չի արտասանվում (Թոխմախյան, 1983, էջ 34-36), սակայն լեզվաբանների շրջանում այն մտայնությունը կա, թե արևելահայերենում ևս՝ նշված ոլորտում, արտասանվում է այդ հնչյունը, թեև որպես կանոն գիտական հիմնավորում չի տրվում դրան: Նախնական տպավորությամբ, գրաբարից հետո միջին հայերենի կամրջմամբ արևմտահայերենի համեմատությամբ զարգացման այլ ընթացք ունենալով, գրական արևելահայերենը լեզվական համակարգի փոփոխության հնարավորության բերումով կարող էր հենց համակարգորեն որդեգրած լինել վերոնշյալ հնչակցություններին նախորդող [ը] ձայնավորի անկման հնչյունական օրենք: Սակայն հարկ է պարզել՝ բոլոր դեպքերում է, որ այն չի արտասանվում: Եթե այո, ուրեմն, իրոք, գործ ունենք լեզվի համակարգային տեղաշարժի հետ: Մինչդեռ նշված տարրերով կապակցությամբ բառերի արտասանության՝ որոշակի հնչուլորտում հանդես բերած երկվությունը՝ մի կողմից, ձևակազմական առանձնահատկությունները՝ մյուս կողմից, այլ բան են հուշում: Հնչուլորտի հաշվառմամբ հետևյալ օրինակափոխությունն ենք նկատում: Նշված հնչակցություններով սկսվող բառերին նախորդող որոշյալ առմամբ բաղաձայնավարտ գոյականը կարող է ստանալ որոշիչ հոդի թե՛ ձայնավոր, թե՛ ձայնորդ տարբերակը. այսպես՝ *դասը սկսվեց* || *դասն սկսվեց*: Ձայնավոր տարբերակի դեպքում ունենում ենք մեկ հնչաշարույթ, որ հավասար է երկու հնչաբառի, այն է՝ [դասը][սկսվեց], ձայնորդ տարբերակի դեպքում ունենում ենք մեկ հնչաբառ, այն է՝ [դասնըսկսվեց]: Ինչպես տեսնում ենք, հնչաշղթայի միջավայրով պայմանավորված՝ մի դեպքում խոսքում՝ մեզ հետաքրքրող բառասկզբի ոլորտում, [ը]ձայնավոր չունենք, մյուս դեպքում նույն ոլորտում ունենենք այդ [ը]-ն: Գալով ձևակազմական տիրույթին՝ հիշում ենք մեկ այլ առանձնահատկություն, որն է միավանկ բառերի հոգնակերտության դեպքում սպասելի *-եր* ձևորդի (բառահարաբերական ձևույթ՝ formant (Աղայան, 1967, էջ 381)) գործառությունը, այնինչ այս կարգի բառերի հոգնակին հոգնակերտ մյուս տարբերակը՝ *-ներ* ձևորդն է ընդունում՝ *սկիզբ – սկզբներ, սպա – սպաներ, ստրուկ – ստրուկներ* ևլն: Այսպիսով՝ ի տարբերություն գրաբարի և արևմտահայերենի՝ արևելահայերենի հնչաշղթայում միայն մի ոլորտում կարող է ի հայտ գալ նշված հնչակ-

ցություններին նախորդող [ը]ծայնավորը: Դրանցով սկսվող բառերի առանձին գործածության դեպքում, ինչպես նաև մնացած ոլորտներում այդ ծայնավորը չի արտասանվում: Ինչ վերաբերում է ձևակազմական օրինաչափությանը, ապա դա ևս հիմք չի կարող լինել պնդման, թե, արևելահայոց խոսքի մասնավոր դրսևորումներից զատ, կա [ը]-ի արտահայտություն: Ի՞նչ է հետևում այս ամենից՝ այն, որ չունենալով իսկ խոսքային արտահայտություն՝ այդ հնչյունը առկա է լեզվական համակարգում՝ հայախոսների լեզվական (ենթա)գիտակցության մեջ: Ասել է՝ գործ ունենք լեզվական նշանի տարածաչափական և հարթաչափական իրողությունների հետ: Հարթաչափորեն, այսինքն՝ խոսքային գծակարգում (Աթայան, 1988) խիստ սահմանափակ գործածություն ունի նշյալ հնչակցություններին նախորդող դիրքում [ը]ծայնավորը: Եվ այդ գործածության հնարավորությունն ու հավանականությունը տրված են տարածաչափորեն՝ լեզվական համակարգի ներունակությամբ և ներգորությամբ: Հենց սրանցով է պայմանավորված հարթաչափորեն միավանկ գոյականների ոչ թե (դարձյալ լեզվականորեն սպասելի) *-եր*, այլ *-ներ* ձևորդով հոգնակերտության հնարավորությունը: Այն, ինչ հնարավոր չէ բացատրել հարթաչափորեն, մեկնելի է և հիմնավորվում է տարածաչափորեն: Հարթաչափորեն (խոսքում) հայերենի զարգացման որոշակի փուլում նրա արևելյան ճյուղի մեջ տեղի է ունեցել վանկակազմի փոփոխություն՝ սկզբնավանկի պարպամբ, որն արտահայտվել է նրա գլխավոր վանկատարի՝ [ը]վանկարարի անկմամբ, իսկ վանկակազմի մյուս տարրը միացել է հաջորդ վանկին, որով վերջինում տեղի է ունեցել վանկատոգորում.

**ըսկիզբ* – *ըս-կիզբ* ⇒ *ը* > \emptyset և *ս* + *կիզբ* > *սկիզբ*,

**ըշպար* – *ըշ-պար* ⇒ *ը* > \emptyset և *շ* + *պար* > *շպար*,

**ըշտապ* – *ըշ-տապ* ⇒ *ը* > \emptyset և *շ* + *տապ* > *շտապ*,

**ըսպա* – *ըս-պա* ⇒ *ը* > \emptyset և *ս* + *պա* > *սպա*,

**ըստրակ* – *ըս-տրակ* ⇒ *ը* > \emptyset և *ս* + *տրակ* > *ստրակ*,

**ըսփյուռք* – *ըս-փյուռք* ⇒ *ը* > \emptyset և *ս* + *փյուռք* > *սփյուռք*,

**ըզգալ* – *ըզ-գալ* ⇒ *ը* > \emptyset և *զ* + *գալ* > *զգալ*:

Տարածաչափորեն (տարածաչափությունը տվյալ դեպքում վերաբերում է ոչ միայն արևելահայերենի համակարգին, այլև հայերենի պատմական համակարգին՝ իր նշակարգով (code), հին հայերենի և մերօրյա արևմտահայերենի հորինվածքներով) պարպված վանկակազմին վերա-

կենդանանալու հնարավորություն է տալիս հենց ինքը՝ լեզուն՝ շարահասական և ձևակազմական օրինաչափությունների գործառությամբ:

Ինչպես ակնարկեցինք վերը, անգլերենում նույնպես կա վանկապարպման համանման իրողություն, որի քննությունը ևս կարևոր լույս կարող է սփռել լեզվական նշանը նույն մեկնակետերով բացահայտելու հարցում: Հանրահայտ փաստ է, որ բաց վանկում անգլերենի ծայնավորները հիմնականում այբբենական հնչողություն են ունենում, և որպես կանոն այդ լեզվում բաց վանկի երեք խումբ են առանձնացնում՝ 1) արտասանվող ծայնավորով ավարտվող վանկ՝ *me, (to) be*, 2) համր [i]-ով ավարտվող վանկ (գրությամբ՝ *e*), որի դեպքում արտասանվում է համր հնչյունին նախորդող ծայնավորը՝ *pie, tie*, 3) համր [i]-ով (գրությամբ՝ *e*) ավարտվող բառ, որը գրապատկերով բաց վանկ է հուշում, բայց արտասանությամբ փակ է՝ *name, make, nine* ևլն (Թոքմաջյան, 1972, էջ 10): Մեզ հետաքրքրողը տվյալ դեպքում երրորդ խմբի օրինաչափությունն է, ինչպես նաև դրան հակադրվող այն իրողությունը, որ արդի անգլերենում կան նաև՝ գրապատկերով փակ վանկ ներկայացնող բառեր, որոնցում ծայնավորները, հակառակ սպասածի, նույնպես այբբենական արտասանություն ունեն, ինչպես՝ *find, night, high* ևլն: Դժվար չէ ենթադրել, որ լեզվական նշանների հնարավոր և հավանական դրսևորումները անգլերենում ևս պատմականորեն ամրակայված նշակարգի արտահայտություններ են: Անգլերենի պատմության ինչ-որ փուլում երրորդ կետում բերված բառերի ծայնավորներն ամենայն հավանականությամբ պետք է արտասանվելիս եղած լինեն այսպես՝

name – *['neimi],

make – *['meiki],

nine – *['naini]:

Ինչ վերաբերում է փակ միավանկ բառերի ծայնավորների այբբենական արտասանության հիմնավորմանը, ապա պետք է ենթադրել, որ դրանք ժամանակին երկվանկ են եղել, որոնց ենթադրյալ գրությունը կարող ենք տալ այստեղ (այս դեպքում չենք հանդգնի արտասանության վերականգնում առաջադրել), այն է՝

find – **find*,

night – **nigeht*,

high – **higeh*:

Հիշեցնենք, որ սա վարկած է, և սրա վերաբերյալ վերջնական եզրակացությունը թողնում ենք անզվերենի պատմաբաններին: Սակայն, կարծում ենք, գիտականորեն «կյանքի իրավունք» ունի այս վարկածը, որովհետև լեզվական աշխարհում պատահական ոչինչ չկա, և հաճախ աննշան փոփոխությունը կարող է հսկայական ազդեցություն ունենալ լեզվական ողջ համակարգի վրա, ի՛նչ խոսք, համաբանության սկզբունքի լայն գործադրմամբ:

Հետաքրքիր մի երևույթ կա հայերենի թվակազմության մեջ: Հոգնակերտ ձևորդներով, հասկանալի է, հոգնակի թիվ է կազմվում: Սակայն *-ներ* ձևորդը, որ վերապահված է գերազանցապես բազմավանկ գոյականների հոգնակի թվի կազմությանը, կարող է մասնակցել եզակի թվի ձևավորմանը՝ ստացական հոդով գոյականի հիմքում ի հայտ եկող ձևահնչությային (morfonological) յուրակերպ դրսևորմանը զուգընթաց: Հիշենք Հովհ. Թումանյանից մի օրինակ.

Դուռներդ միշտ բաց լինի,

Տաշտներդ լի հաց լինի:

«Դուռ» բառի կանոնական հոգնակին է «**դռներ**», «տաշտ» բառինը՝ «**տաշտներ**»: «Դուռ» և «տաշտ» բառերի «դռներ» և «տաշտեր» նշանակիչները բովանդակավորված են «մեկից ավել դուռ», «մեկից ավել տաշտ» նշանակյալներով: Մինչդեռ «**դուռներդ**» բառածևը նույն տան անդամների համար ընդհանուր «մեկ դուռ» է նշանակում: Նույնը վերաբերում է «**տաշտներ**» ձևին: Հետևաբար *դուռներդ – դռներդ, տաշտներդ – տաշտերդ* օրինակների զուգանդամները հակադրական բաշխման հարաբերությամբ անփոփոխակալին միավորներ են: Առաջինում ստուգվող նշաններն են *-ու-* և *-ը-* նշույթները [դուռներդ)– [դըռներդ], երկրորդում՝ *-ն-* և *-ժ-* (զրո) նշույթները [տաշտներդ)– [տաշտժերդ]¹: Սա հայերենի եզակի թվի դրսևորումներից մեկն է՝ **առանձնական եզակի թվի** (ենթա)քերույթ, որ հսկայական խնայողություն է ապահովում մեր լեզվում. ասելու փոխարեն «ձեզնից յուրաքանչյուրին պատկանող տաշտը»՝ ասվում է «տաշտներդ»: Առանձնական եզակի թիվը հակադրվում է մի կողմից՝ հոգնակի

¹ Հարկ է նկատել, որ լեզվաբանության մեջ լայն տարածում գտած «զրո նշան» ձևակերպումը զուրկ է գիտական հիմքից: Պետք է ասել «զրո նշույթ», ինչպես մենք ենք ներկայացրել այստեղ, որովհետև զրո նշույթը լիարժեք նշան է այնպես, ինչպես նշութավոր միավորը, այլպես նշանային հակադրություն չէր ապահովվի:

թվին, մյուս կողմից՝ սովորական եզակի թվին: Առանձնական և սովորական եզակի թվերը նույնպես հակադրական բաշխման հարաբերության մեջ են: Գալով նշանային մեկնակետերին՝ պարտ է մեզ արձանագրել հետևյալը: Լեզուն հնարավորություն է տալիս թվի քերականական կարգի քերույթների նշանային տարբերակման, որի համար պարտադիր է նշանակիչների հնարավոր տարբերակման հավանականությունը, որը կարող է հակադրվող քերույթներում լինել նշուֆակիր կա՛մ երկուստեք, կա՛մ դրանցից մեկում: Գրական արևելահայերենում սովորական եզակին աննշույթ է, հոգնակին՝ միշտ նշուֆակիր: Եզակի թվի նշուֆակրության բացակայությունը լրացվում է առանձնական եզակիի պարտադիր նշուֆակրությամբ: Հայերենի օրինակը ցույց է տալիս, որ եզակի և հոգնակի թվերում կարող է լինել նույն նշույթը (*-ներ*), միայն թե այս դեպքում հակադրության չեզոքացում տեղի չի ունենում, որովհետև հոգնակի թվին հակադրվում է թեկուզ նրան վերապահված ձևորդով կազմավորվող, բայց ինքնատիպ (առանձնական) եզակի թվի կազմությանը մասնակից ձևակազմական ու ձևահնչութային մի անօրինակ զինանոց, որը կանխում է հնարավոր շփոթը և հստակորեն տարբերակում եզակի և հոգնակի քերույթները: Այսպիսով՝ հնարավոր և հավանական է եզակի թվի արտահայտումը նաև հոգնակի թվի նշանակչով:

Լեզվի նշակարգի և ներքին ձևի «հուշումով» է, որ բայասեռով և անցողականությամբ պայմանավորված արժութայնությունը համաչափ հնարավորություն է ընձեռում պատճառական կառուցվածքից կա՛մ ներգործական, կա՛մ չեզոք կառուցվածքին, ներգործականից՝ կրավորական կառուցվածքին և հակադարձ անցումների հավանականությանը: Ներգործական կառուցվածքում և սրա կրավորական փոխակերպի մեջ պարտադիր է երկարժութայնությունը, չեզոք սեռի բայից պատճառական սեռ կազմած բայով պատճառական կառուցվածքում և սրա չեզոք փոխակերպի մեջ նույնպես երկարժութայնություն է պարտադիր, ներգործական սեռի բայից պատճառական սեռ կազմած բայով պատճառական կառուցվածքում և սրա ներգործական փոխակերպի մեջ պարտադիր է եռարժութայնությունը:

Լեզվական նշանալորտի կայական հնարավորությունը ննջած է լեզվակիրների ենթագիտակցության մեջ (Abrahamyan, 2001): Յուրաքանչյուր նշան իրացվելիության, իրացման և իրացվածության հավանականու-

թյուն ունի նշանուլորտի ոչ միայն նշութակիր, այլև աննշոյթ կողմերով: Լեզվական նշանուլորտը սահմանագծվում է լեզվի տրամաբանական համակարգի վերնուլորտի ստորոգելիական սկզբնաղբյուրից մինչև հոգեբանական շարակարգի միջնորդավորմամբ խոսքային գծակարգի շղթայավորման ավարտ, այսինքն՝ մինչև նշանասութայամբ իրացված լեզվական փաստ և դարձ դեպի լեզվական համակարգի հուշադարան: Լեզվական հորիվածքի վերնուլորտը էացման՝ սերտաճած առարկայահատկանշային հնարավորութայան տիրոյթն է, միջնուլորտը անտարրորոշ ստորեզելիների տիրոյթն է, ներքնուլորտը տարրորոշված, բայց և փոխատեղելի ստորոգյալի և ստորոգելիի տիրոյթն է (Գյուլգատյան, 2019): Յուրաքնչյուր լեզվական նշանի մեջ կա առնվազն քողարկյալ ստորոգում (Балли, 1955, с. 120):

Եզրակացութայուն

1) Առանց հնարավորութայան՝ հավանականութայուն չի լինում, առանց հավանականութայան՝ հնարավոր իրացում չի լինում: Լեզվական նշանի հնարավորութայունը սկզբնավորվում է լեզվի ներունակ տիրոյթից և ներգորութայան ենթաշերտում հավանականութայան հետ սերտաճած՝ մշտապես ուղեկցում լեզվակիրներին հաղորդակցութայան ընթացքում:

2) Լեզվական նշանի սկզբնավորումն իսկ հնարավոր է դառնում ստորոգմամբ: Ողջ լեզվական հորինվածքի առանցքը ստորոգումն է, որ ինքնին նշանային բաղադրութայուն է. լեզվական նշանը ստորոգային ակունքից ծավալվող նշակարգված հաղորդակցութայան և՛ հիմքն է, և՛ ընթացքը՝ այդ հաղորդակցութայունն ինքը:

3) Լեզվական համակարգը լեզվի տրամաբանական «կացավայրն» է՝ վերնուլորտում նշանային հանդարտ կացութայների հարացուցավորմամբ, միջնուլորտում՝ դրանց պրկմամբ և ներքնուլորտում՝ արտահայտվելիք խոսքում հուշող գծայնացմամբ: Բոլոր ոլորտները և բոլոր գոյամակարդակները տոգորված են մարդկային հաղորդակցութայանը ծառայող նշանայնութայամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Աթայան Է. Ռ., Լեզուների ձևաբանական տիպաբանութայան առարկան և «անհատական լեզվական ձևի» բացահայտման խնդիրը // Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1988, հմ. 2, էջք 37-45 : Atayan E. R., Lezunereri dzevabanakan tipabanutyar ararkan ev «anhatakan lezvakan dzevi»

- bacahaytman khndiry // Banber Yerevani hamalsarani, Yerevan, 1988, № 2, ejq 37-45 (in Armenian)
2. Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 404 էջ : Aghayan E. B., Zhamanakacic hayereni holovumy ev khonarhumy, Yerevan, Haykakan SSH GA hrat., 1967, 404 ej (in Armenian)
3. Գուլզատյան Դ. Վ., Հասկազական դաշտ և ազդողորտ // ՎԷՄ համահայկական հանդես, Երևան, 2019, հմ. 4 (68), էջք 8–30 : Gyulzatyanyan D. V., Haskacakan dasht ev azdolort // VEM hamahaykakan handes, Yerevan, 2019, №4 (68), ejq 8-30 (in Armenian)
4. Թոխմախյան Ռ. Մ., Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1983, 184 էջ : Tokhmakhyan R. M., Zhamanakacic hayereni sheshtabanutyuny, Yerevan, Haykakan SSH GA hrat., 1983, 184 ej (in Armenian)
5. Թոքմաջյան Հ. Ա., Մխիթարյան Ե. Ս., Անզվերեն լեզվի ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 1972, 344 էջ : Toqmajyan H. A., Mkhitarayan Ye. S., Angleren lezvi dzernark, Yerevan, YePH hrat., 1972, 344 ej (in Armenian)
6. Abrahamyan A. S., Language, Alter-Consciousness, and Self-Consciousness. // Semiotics and Language Teaching: Theoretical Principles and Practical Applications. Selected Papers Presented at the II Conference Held at Yerevan University 20-22 May 1996. Ann Arbor: Caravan Books, 2001, pp. 49-59.
7. Балли Ш., Общая лингвистика и вопросы французского языка, Москва, изд. Иностранной литературы, 1955, 416 стр.: Bally Ch., Obshaya lingvistika i voprosi francuzskogo yazika, Moskva, izd. Inostrannoy literaturi, 1955, 416 str. (in Russian)

DAVIT GYULZATYAN - ASPECTS OF POSSIBILITY AND PROBABILITY OF LANGUAGE SIGN

Keywords: *semiosis, semiosphere, potential sign, language system, hierarchical levels, ontic language layers, allocative singular number*

The language sign, among other features, possesses ontological measurability as well, where contrasted comembers take the role of the units of measurement as measurable aspects of the corresponding sign concept. Spatial dimensional and two dimensional, possible and probable, symmetric and dissymmetric aspects of sign are realia that explicate the measurability. This is evidently a semantic phenomenon with a relationship between objects and signs, where the above-mentioned pairs occur in the role of an object towards a sign. The expression of homonature realities in languages is interesting; for example, the regularity of *n - 1* syllables in speech in relation to the linguistic system with the possibility of syllabic deprivation of literary Eastern Armenian and modern English, which is revealed historically by the

method of internal restoration, which confirms the imposition of the language code on existing patterns. Under the dictates of the same code, one of the formants intended for the plural number in Armenian gets the opportunity to participate with morphological patterns in the formation of a variant of the singular number - the allocative singular number, which increases the possibility of expanding the function of that formant. It is with the "hint" of the language code and the internal form that the valence determined by the verb gender and transitivity provides a proportional opportunity for the probability of transitions from the causative structure to either the active or neutral structure, from the active to the passive structure and vice versa. The linguistic system is the logical "residence" of the language, with the paradigmaticity of potential signs in the upper sphere, their stretching in the middle sphere, and the suggestive linearization of speech to be expressed in the lower sphere. All spheres are equipped with signality.

ДАВИТ ГЮЛЗАТЯН - АСПЕКТЫ ВОЗМОЖНОСТЕЙ И ВЕРОЯТНОСТЕЙ ЛИНГВИСТИЧЕСКОГО ЗНАКА

Ключевые слова: семиозис, семиосфера, потенциальный знак, языковая система, иерархические уровни, онтические уровни языка, распределительное единственное число

Языковому знаку наряду с другими особенностями свойственна также онтологическая измеримость, где роль единиц измерения выполняют противопоставленные параллельные компоненты, которые выступают в качестве измеримых аспектов соответствующего знакового понятия. Среди реальных, выявляющих измеримость, можно отметить стереометрические и планиметрические, возможностные и вероятностные, пропорциональные и несоразмерные исходные пункты знака. Несомненно, это семантическое явление, которое осуществляется во взаимосвязи знака и предметов, где по отношению к знаку в роли предмета выступают указанные корреляты. Интересным является выражение идентичных реальных в разных языках. Так, например, в литературном восточноармянском и в современном английском языках с возможностью слогаопустошения обоснованность слога $n - 1$ в речи по отношению к языковой системе объясняется исторически с использованием метода внутренней реконструкции, что подтверждает безусловное влияние языкового кода на действующие закономерности. По предписанию того же кода в армянском языке один из формантов множественного числа получает возможность вместе с морфологическими закономерностями участвовать в образовании распределительных

тельного единственного числа, в результате чего расширяется вероятность функционального применения этого форманта. По «подсказке» языкового кода и внутренней формы валентность, обусловленная залогом глагола и переходностью, предоставляет пропорциональную возможность для вероятностных переходов от каузативных конструкций или к действительным, или нейтральным конструкциям, от действительных – к страдательным и наоборот. Возможность выражения языковой композиции обусловлена предикацией. Предикация сама по себе является знаковой системой, следовательно, языковой знак имеет предикативную основу, и в каждом языковом знаке присутствует, как минимум, скрытая предикация. Лингвистическая система является логическим «пристанищем» языка: верхняя сфера характеризуется парадигматизацией размеренного знакового порядка, срединная сфера – его стягиванием, а нижняя сфера – линейностью потенциально высказанной речи. Все эти сферы насыщены знаковым содержанием.

Ներկայացվել է՝ 15.08.2022

Գրախոսվել է՝ 14.11.2022